ԳԴ1/0090/01/23
(ՀԿԴ/0051/01/24)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 ապրիլի 2024 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի մարտի 29-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի դեկտեմբերի 29-ին Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Արտյոմ Հովհաննեսի Շահնազարյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով թիվ 90666123 (ԳԴ1/0090/01/23) քրեական վարույթը:

1.1. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հունվարի 9-ին որոշում է կայացրել թիվ ԳԴ1/0090/01/23 քրեական վարույթը ստանձնելու և 2024 թվականի հունվարի 22-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի մարտի 12-ին որոշում է կայացրել թիվ ԳԴ1/0090/01/23 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին:

3. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի մարտի 29-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0051/01/24 (ԳԴ1/0090/01/23) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի ապրիլի 4-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2023 թվականի սեպտեմբերի 29-ի որոշմամբ Արտյոմ Հովհաննեսի Շահնազարյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«նա հանդիսանալով 2017թ. ձմեռային զորակոչին ենթակա զորակոչիկ, ցանկանալով խաբեությամբ ազատվել պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից, 2017 թվականի ձմեռային զորակոչից սկսած խաբեության եղանակով՝ այլ անձի մեզի նմուշ ներկայացնելով, նշված զորակոչից սկսած ստացել է տարկետումներ՝ 31.01.2018 թվականին «Իզոլացված միզային համախտանիշ, պրոստատիտ» ախտորոշմամբ 5 ամիս ժամկետով, 23.07.2018թ.-ին՝ «Միզային համախտանիշ, պրոստատիտ» ախտորոշմամբ՝ 10 ամիս ժամկետով, 06.07.2019թ.-ին՝ «Պրոստատիտ, էրիթրոցիտուրիա» ախտորոշմամբ՝ 10 ամիս ժամկետով, 24.01.2020թ.-ին՝ «Պրոստատիտ, հեմատուրիա» ախտորոշմամբ՝ 5 ամիս ժամկետով, 13.08.2020թ.-ին՝ «Հեմատուրիա, Պրոստատիտ» ախտորոշմամբ՝ 5 ամիս ժամկետով, իսկ*

29.12.2021թ.-ին «Իզոլացված հեմատուրի» ախտորոշումով ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար ու հաշվառվել է պահեստազոր (…)»[1]*:*

6. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի մարտի 12-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի կանոնի կիրառմամբ գործից մաս անջատելու և առանձին քննելու դրույթը սերտ փոխկապված է ՀՀ քրեական դատավարության օրենսդրության մի շարք հիմնարար դրույթների հետ, մասնավորապես՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի, մեղադրյալի պաշտպանության իրավունքի, res judicata (իրավական որոշակիության) և non bis in idem (կրկին դատվելու անթույլատրելիության) սկզբունքների, մեղադրանքի կառուցվածքին և մեղադրական եզրակացությանը ներկայացվող պահանջների, դատական քննության առարկայի և սահմանների և դրանով պայմանավորված դատավճիռ կայացնելիս լուծման ենթակա հարցերի հետ, ուստի յուրաքանչյուր դեպքում մեկ կամ մի քանի հանցագործությունների կատարմանը մասնակից անձանց նկատմամբ քրեական գործից մաս անջատելու մասին որոշում կայացնելիս պետք է հաշվի առնել այդ դրույթների պահանջները ևս, որպեսզի չխախտվեն դրանք և դրանով պայմանավորված չվտանգվի դատավարության արդարացիությունը:*

(…) Վերոգրյալ չափանիշների լույսի ներքո անդրադառնալով սույն գործին՝ Դատարանն արձանագրում է, որ 2023 թվականի մայիսի 13-ին ՀՀ ՔԿ ՔՔԳՎ հինգերորդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ս.Մխիթարյանը թիվ 58219919 քրեական վարույթից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի կարգով Արտյոմ Հովհաննեսի Շահնազարյանի կողմից պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու մասով քրեական վարույթը՝ վերջինի կողմից ՀՀ տարածքից բացակայելու հիմքով անջատելիս, վարույթին թիվ 90666123 համարը շնորհելիս, իսկ թիվ 58219919 քրեական վարույթով 15.05.2023 թվականին մեղադրական եզրակացություն կազմելիս և 19.05.2023 թվականին հանրային մեղադրողի կողմից թիվ 58219919 քրեական վարույթը ՀՀ հակակոռուպցիոն քրեական դատարան մուտք անելիս, որին շնորհվել է թիվ

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 2, թերթեր 19-20:

ՀԿԴ2/0015/01/23 համարը, իսկ թիվ 90666123 քրեական վարույթը 2023 թվականի դեկտեմբերի 29-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան մուտք անելիս, որին շնորհվել է թիվ ԳԴ1/0090/01/23 համարը, պետք է ուշադրություն դարձնեին այն հանգամանքին, թե արդյոք դատարանները հնարավորություն կունենան իրականացնելու օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննություն, արդյոք առաձին մեղադրյալներին առաջադրված մեղադրանքների կապակցությամբ հնարավոր կլինի կայացնել օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատավճիռ՝ հաշվի առնելով, որ երկու գործերը փաստական հանգամանքներով, ապացուցողական զանգվածով կապված են միմյանց հետ, ինչպես նաև պետք է հաշվի առնեին այն, թե արդյոք դատարանի գործունեության արդյունքում չի վտանգվի առանձին քննվող գործով դատարանի անկախությունն ու անկողմնակալությունն՝ արդեն իսկ կայացված դատավճռի նախադատելիության (փաստացի) պատճառով, չեն կայացվի իրար հակասող դատավճիռներ և դրանով իսկ վտանգվի օրենքի և դատարանի առջև հավասարության սկզբունքը:

Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Արտյոմ Հովհաննեսի Շահնազարյանին մեղադրանք է առաջադրվել թիվ 58219919 քրեական վարույթից անջատված թիվ 90666123 քրեական վարույթի շրջանակներում. թիվ 58219919 քրեական վարույթը 19.07.2019 թվականին հարուցվել է պաշտոնատար անձանց կողմից առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու, առանձնապես խոշոր չափերով կաշառք տալու, իրավունք վերապահող ակնհայտ կեղծ փաստաթուղթ պատրաստելու, իրացնելու և օգտագործելու դեպքերով: Թեև Արտյոմ Հովհաննեսի Շահնազարյանին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների շարքում, սակայն նրան առաջադրված մեղադրանքը փաստական հանգամանքներով ուղղակիորեն կապված է ՀՀ հակակոռուպցիոն քրեական դատարանում քննվող թիվ ՀԿԴ2/0015/01/23 քրեական գործի և հատկապես մեղադրյալներ Քնարիկ Վոլոդյայի Սուքիասյանին և Անժիկ

Գառնիկի Աբրահամյանին (Արփյում Հովհաննեսի Շահնազարյանի մայրը) առաջադրված մեղադրանքների հետ:

Դատարանը գտնում է, որ պատշաճ և համակողմանի քննություն ապահովելու նպատակով, ելնելով արդարադատության շահից, մեղադրյալ Արփյում Հովհաննեսի Շահնազարյանի քրեական գործը պետք է միացվի մեղադրյալներ Քնարիկ Սուքիասյանի, Կարինե Սաֆարյանի, Անժիկ Աբրահամյանի, Լիանա Այվազյանի, Աննա Ֆահրադյանի, Հովհաննես Մահլամյանի և Մարատ Գևորգյանի վերաբերյալ ՀՀ հակակոռուպցիոն քրեական դատարանում քննվող թիվ ՀԿԴ2/0015/01/23 քրեական վարույթին, քանի որ դրանք փաստական հանգամանքներով փոխկապված են մեկը մյուսի հետ և կազմում են մեկ ամբողջություն: Ընդ որում, եթե Արփյում Հովհաննեսի Շահնազարյանի վերաբերյալ քրեական վարույթը չանջատվեր թիվ 58219919 քրեական վարույթից՝ Ա.Շահնազարյանի կողմից ՀՀ տարածքից բացակայելու հիմքով, ապա Արփյում Հովհաննեսի Շահնազարյանի վերաբերյալ քրեական վարույթը քննվելու էր ՀՀ հակակոռուպցիոն քրեական դատարանում՝ թիվ ՀԿԴ2/0015/01/23 քրեական վարույթի շրջանակներում, ինչպես Մարատ Մելիքի Գևորգյանինը, ում մեղադրանք է առաջադրվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 34-327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Հարկ է նաև փաստել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը կարգավորում է նույն դատարանի մեկից ավելի դատավորների մոտ գտնվող վարույթները միացնելու հարցը, սակայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով առկա չէ որևէ կարգավորում, թե ինչ ընթացակարգով են միացվում տարբեր դատարանների վարույթներում գտնվող քրեական գործերը: Դատարանը գտնում է, որ նշված հարցը ենթակա է քննարկման առարկայական ընդդատության կանոնների համատեքստում, քանի որ փաստ է, որ Արփյում Հովհաննեսի Շահնազարյանի վերաբերյալ քրեական գործը ՀՀ հակակառուպցիոն քրեական դատարանում քննվող թիվ ՀԿԴ2/0015/01/23 քրեական վարույթի մասն է կազմում:

Այսպիսով Դատարանն արձանագրում է, որ փաստական հանգամանքներով կապված ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթներն անջատելն ի սկզբանե թելադրված չի եղել արդարադատության շահի պաշտպանության

անհրաժեշտությամբ և կարող է բացասաբար անդրադառնալ վարույթների արդարացիության վրա՝ առաջացնելով սույն որոշման 3.7.-րդ կետում նշված բացասական հետևանքները:

Հաշվի առնելով վերոգրյալը Դատարանը գտնում է, որ թիվ ԳԴ1/0090/01/23 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության պետք է ուղարկել ՀՀ հակակոռուպցիոն քրեական դատարան՝ թիվ ՀԿԴ2/0015/01/23 քրեական վարույթի հետ համատեղ քննելու նպատակով (...)»[2]*:*

7. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի մարտի 29-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) [Դ]ատարանն արձանագրում է, որ թիվ 90666123 քրեական վարույթով Արտյոմ Հովհաննեսի Շահնազարյանին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է ներկայացվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով 2017թ. ձմեռային զորակոչին ենթակա զորակոչիկ, ցանկանալով խաբեությամբ ազատվել պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից, 2017 թվականի ձմեռային զորակոչից սկսած խաբեության եղանակով՝ այլ անձի մեզի նմուշ ներկայացնելով, նշված զորակոչից սկսած ստացել է տարկետումներ՝ 31.01.2018 թվականին «Իզոլացված միզային համախտանիշ, պրոտենիուրիա» ախտորոշմամբ 5 ամիս ժամկետով, 23.07.2018թ.-ին՝ «Միզային համախտանիշ, պրոտենիուրիա» ախտորոշմամբ՝ 10 ամիս ժամկետով, 06.07.2019թ.-ին՝ «Պրոտենիուրիա, էրիթրոցիտուրիա» ախտորոշմամբ՝ 10 ամիս ժամկետով, 24.01.2020թ.-ին՝ «Պրոտենիուրիա, հեմատուրիա» ախտորոշմամբ՝ 5 ամիս ժամկետով, 13.08.2020թ.-ին՝ «Հեմատուրիա, Պրոտենիուրիա» ախտորոշմամբ՝ 5 ամիս ժամկետով, իսկ 29.12.2021թ.-ին «Իզոլացված հեմատուրի» ախտորոշումով ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար ու հաշվառվել է պահեստազոր:*

Դատարանը նախ փաստում է, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 6-ի և 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 1-ի համաձայն՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածը նախատեսված չէ կոռուպցիոն հանցանքների ցանկում:

---

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 3, թերթեր 38-44:

Բացի այդ, Դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից սույն քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկելու մասին 2024 թվականի մարտի 12-ին կայացված որոշմամբ արտահայտված այն դիրքորոշմանը, որ Արտյոմ Շահնազարյանին առաջադրված մեղադրանքը փաստական հանգամանքներով ուղղակիորեն կապված է ՀՀ հակակոռուպցիոն դատարանում քննվող թիվ ՀԿԴ2/0015/01/23 քրեական գործի և հատկապես մեղադրյալներ Քնարիկ Վոլոդյայի Սուքիասյանին և Անժիկ Գառնիկի Աբրահամյանին առաջադրված մեղադրանքների հետ: Դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Արտյոմ Շահնազարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա հանդիսանալով 2017թ. ձմեռային զորակոչին ենթակա զորակոչիկ, ցանկանալով խաբեությամբ ազատվել պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից, 2017 թվականի ձմեռային զորակոչից սկսած խաբեության եղանակով՝ այլ անձի մեզի նմուշ ներկայացնելով, նշված զորակոչից սկսած ստացել է տարկետումներ իսկ 29.12.2021թ.-ին ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար ու հաշվառվել է պահեստազոր, այսինքն՝ մեղադրյալին առաջադրված մեղադրանքում նկարագրված չեն այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք առնչվում են պաշտոնատար անձանց կողմից առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու, առանձնապես խոշոր չափերով կաշառք տալու, իրավունք վերապահող ակնհայտ կեղծ փաստաթուղթ պատրաստելու, իրացնելու և օգտագործելու դեպքերին, Արտյոմ Շահնազարյանին չի մեղսագրվում որևէ անձի հետ հանցակցությամբ արարքի կատարում, որի վերաբերյալ քննվում է առանձին վարույթ:

Դատարանը հարկ է համարում նաև նկատել, որ օրենսդիրը չի նախատեսել ընդհանուր իրավասության դատարանում և մասնագիտացված դատարանում քննվող քրեական վարույթների միացման ընթացակարգ, ուստի Դատարանը չի կարող վարույթ ընդունել և քննել ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ոչ ընդդատյա քրեական գործ՝ ելնելով միայն այն հանգամանքից, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի մեկ այլ դատավորի վարույթում քննվում է տվյալ վարույթին առնչվող այլ վարույթ: Ընդ որում, նույն դատարանի մեկից ավելի դատավորների մոտ գտնվող

վարույթները միացնելու հարցը լուծում է դատարանի նախագահը, ոչ թե ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ոչ ընդդատյա քրեական գործը վարույթ ընդունած դատավորը:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0051/01/24 (ԳԴ1/0090/01/23) քրեական վարույթը ենթակա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին՝ հաշվի առնելով, որ այն չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ (…)»[3]:

8. 2023 թվականի մայիսի 22-ին Հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացրել Քնարիկ Վոլոդյայի Սուքիասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 440-րդ հոդվածի 4-րդ մասով, 46-436-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 34-38-327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Կարինե Ժորայի Սաֆարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Անժիկ Գառնիկի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Լիանա Ջավենի Այվազյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Աննա Մովսեսի Ֆահրադյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 2-րդ մասով, Հովհաննես Կոլյայի Մահլամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և Մարատ Մելիքի Գևորգյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 34-327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով թիվ ՀԿԴ2/0015/01/23 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին[4]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

---

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 3, թերթեր 56-60:

[4] Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ *ՀԿԴ/0232/01/23* քրեական վարույթը:

դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԳԴ1/0090/01/23 (ՀԿԴ/0051/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]:

Միևնույն ժամանակ, դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. *«(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա*

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[7]*:*

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել վարույթը Հակակոռուպցիոն դատարան փոխանցելու մասին՝ փաստելով, որ թեև Արտյոմ Շահնազարյանին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ներկայացված մեղադրանքն ընդգրկված չէ ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների շարքում, սակայն այն փաստական հանգամանքներով ուղղակիորեն կապված է Հակակոռուպցիոն դատարանում քննվող թիվ ՀԿԴ2/0015/01/23 քրեական վարույթի հետ, հետևաբար պատշաճ և համակողմանի քննություն ապահովելու նպատակով, ելնելով արդարադատության շահից, մեղադրյալ Արտյոմ Շահնազարյանի վերաբերյալ քրեական վարույթը պետք է միացվի Հակակոռուպցիոն դատարանում քննվող թիվ ՀԿԴ2/0015/01/23 քրեական վարույթին[8]:

- Հակակոռուպցիոն դատարանն արձանագրել է, որ Ա.Շահնազարյանին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված ենթադրյալ հանցանքը չի հանդիսանում կոռուպցիոն բնույթի: Միաժամանակ Հակակոռուպցիոն դատարանն իր անհամաձայնությունն է հայտնել Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն դատողությանը, որ Ա.Շահնազարյանին առաջադրված մեղադրանքը փաստական հանգամանքներով ուղղակիորեն կապված է Հակակոռուպցիոն դատարանում քննվող թիվ ՀԿԴ2/0015/01/23 քրեական վարույթի հետ[9]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ սույն գործի նյութերի՝

---

[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

մասնավորապես, մեղադրական եզրակացության[10] ուսումնասիրությունից հետևում է, որ Արտյոմ Շահնազարյանի վերաբերյալ թիվ ԳԴ1/0090/01/23 (ՀԿԴ/0051/01/24) քրեական վարույթը, որն անջատված է տվյալ պահին Հակակոռուպցիոն դատարանում քննվող թիվ ՀԿԴ2/0015/01/23 քրեական վարույթից՝ Ա.Շահնազարյանի կողմից ՀՀ տարածքից բացակայելու հիմքով, փաստական հանգամանքներով անմիջականորեն կապված է Հակակոռուպցիոն դատարանում քննվող հիշյալ քրեական վարույթի՝ մասնավորապես մեղադրյալներ Քնարիկ Վոլոդյայի Սուքիասյանի և Անժիկ Գառնիկի Աբրահամյանի մեղադրանքների հետ:

Նման պայմաններում ընդունելի են Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն դատողությունները, որ թիվ ԳԴ1/0090/01/23 և ՀԿԴ2/0015/01/23 քրեական վարույթներն իրարից անջատ քննվելու պարագայում չի բացառվում, որ նույն փաստական հանգամանքներով կարող են կայացվել երկու՝ իրար հակասող եզրափակիչ դատական ակտեր, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել անորոշության, վտանգել օրենքի առջև հավասարության սկզբունքը, ինչպես նաև իր ազդեցությունն ունենալ դատավարության արդարացիության՝ վարույթի պատշաճ և համակողմանի քննության վրա:

16. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԳԴ1/0090/01/23 (ՀԿԴ/0051/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին, հիմնավոր է:

17. Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև, ելնելով արդարադատության շահի պաշտպանության և վարույթի արդարացիության ապահովման անհրաժեշտությունից՝ գտնում ենք, որ թիվ ԳԴ1/0090/01/23 (ՀԿԴ/0051/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

[10] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 2, թերթեր 98-113:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Արտյոմ Հովհաննեսի Շահնազարյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով թիվ ԳԴ1/0090/01/23 (ՀԿԴ/0051/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ